№ 6 Երեքշաբթի Յունվարի 20 — 1887 — Երեքշաբթի Յունվարի 20 № 6

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի: Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՆԵՐԿԱՅ **1887** ԹՎԻՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարօնսկայա և Բազարնայա փողոցների անկիւնում, Թամամշևի տանը:)

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինքներս չը գիտենք ինչ ենք ուզում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բաթումից. Նամակ Աղստաֆայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բուլղարական հարցը. Սալիսբըրիի կարծիքը եւրոպական քաղաքականութեան մասին. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ծայրեր.

ԻՆՔՆԵՐՍ ՉԸ ԳԻՏԵՆՔ ԻՆՉ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ

Թիֆլիսում, ինչպէս յայտնի է, կան չորս հատ կլուբներ՝ Անգլիական կլուբ, Կրուժոկ, Թիֆլիսի ժողովարան (Հայոց կլուբ) և Վաճառականական կլուբ:

Այդ բոլոր հիմնարկութիւնների նպատակն է իսկապէս միջոց տալ իրանց անդամներին ուտել և խմել, թուղթ խաղալ և մի մի անգամ պար գալ,—ուրիշ ոչինչ: Ոչ մի բարոյական, կրթիչ նպատակ, մտաւորապէս զարգացնող ոչինչ տարր չը կայ այդ հաստատութիւնների մէջ: Բոլոր այդ հաստատութիւններից գուցէ Կրուժոկն է միայն, որի անդամների մէջ գոյութիւն ունի թատրօնասէրների կազմակերպված և իրանց գործին նուիրված մշտական խումբը: Մնացածների գոյութեան նպատակը այս է՝ ամեն երեկոյ անդամները հաւաքվում են, անմիջապէս նստում են թուղթ խաղալու, թղթախաղից յետոյ ընթրիք են ուտում, իսկ շաբաթը մի անգամ, մինչև որ անդամների և անդամուհիների մի մասը պար են գալիս, մնացածները դարձեալ թուղթ են խաղում… Ահա այս է այդ տեսակ հաստատութիւնների ամբողջ նպատակը:

Մեր այդ բոլոր կլուբները հիմնվել են մէկ միւսի ետևից: Գտնվում էին մարդիկ, որոնք անբաւական լինելով կլուբների մէկից, դուրս էին գալիս նրա անդամութիւնից և հիմնում էին մի նոր կլուբ: Բայց նորը, հիմնվելուց յետոյ, իր կազմակերպութեամբ, իր ընթացքով կատարելապէս նոյն ուղղութեան էր հետևում: Նոր հիմնված կլուբի մէջ կրկին սկսում էին թուղթ խաղալ, ուտել ու խմել և մի մի անգամ պար գալ—աւելի ոչինչ:

Այժմ լսում ենք որ դժգոհ լինելով մեր քաղաքում եղած չորս կլուբներից էլ, երիտասարդների մի խումբ դիտաւորութիւն ունի դիմել կառավարութեանը մի հինգերորդ կլուբի հաստատութեան թոյլտւութիւն ստանալու համար: Բայց այս անգամ նոր կլուբի հիմնադիրները մտադիր են իրանց ժողովարանին գերմանական „Verein"-ների կազմակերպութիւնը տալ, այսինքն մտցնել ընկերութեան մէջ զուարճացնող միջոցների հետ միասին և կրթիչ ու մտաւորապէս զարգացնող տարրը: Դիտաւորութիւն կայ բացի այլ և այլ զուարճութիւններից ունենալ ժողովարանում հարուստ գրադարան և ընթերցարան, կազմակերպել ընկերութեան անդամներից օրկէստր ու երգեցիկ խումբ, տալ թատրօնական ներկայացումներ, գրական երեկոներ, դասախօսութիւններ և այլն…

Բայց հարցը դրանումն է թէ այդ նոր ժողովարանն էլ մի քանի ժամանակից յետոյ, ինչպէս մեր նախկին կլուբները, արդեօք ենթարկվելու չէ՞ ընդհանուր հոսանքին, արդեօք հետևելու չէ՞ հների պէս միակերպ և անբովանդակ ուղղութեանը… Մէկ էլ տեսանք՝ բոլոր բարձր, կրթիչ, զարգացնող նպատակները թողած՝—նոր ընկերութիւնն էլ հների նման դարձաւ. անդամները սկսեցին թուղթ ու բիլիարդ խաղալ, ընթրիք ուտել ու մի մի անգամ պար գալ, և աւելի ոչինչ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Յունվարի 13-ին

Անձրև և ձիւն, ձիւն և անձրև կամ կարկուտ,—ահա ինչով է բնութիւնը փոփոխակի հիւրասիրում մեզ բաթումցիներիս, ներկայումս: Դեռ երկու շաբաթ առաջ բաթումցիներս վայելում էինք մի հիանալի եղանակ: Լեռների և դաշտերի կանաչութիւնը և արդէն բացվել սկսած գարնանային ծաղիկները չարունակ մեզ դէպի իրանց էին հրապուրում, բայց յանկարծ զրկվեցանք այդ բոլորից և այժմ ձիւնի կամ անձրևի ու ցրտի պատճառով ստիպված ենք մշտապէս փակված կեանք վարելու: Աւելացնելով սորա վրա և քաղաքիս փողոցների մէջ կուտակված ջրախառն ձիւնը, որ սաստիկ դժուարացրել է փողոցներով անցուդարձ անելը,—կարելի է երևակայել թէ որպիսի դրութեան մէջ ենք գտնվում մենք ներկայումս: Փողոցների մէջ դիզված ձիւնի շնորհով անձրևի և հալչող ձիւնի ջրերը լճացած ծածկել են քաղաքիս համարեա բոլոր փողոցները. անցուդարձ անելը համարեա անհնարին է դարձել: Մենք կատարելապէս լողում ենք ջրերի մէջ, շատ տեղերում մարդիկ միմեանց շալակով են անց կացնում: Եւ սակայն ոչ ոք չը կայ որ սորա վրա ուշադրութիւն դարձնէ. քաղաքս իր նշանաւոր եկամտաւոր հանդերձ, կարողութիւն չունի մշակներ վարձելու, որպէս զի գոնէ փողոցների ամենագլխաւոր կէտերում մաքրէին ձիւնը և անցնելու ճանապարհ բանային: Ոչ ոք չը կայ, որ գէթ տանտէրերին ստիպէ մաքրել իրանց տների առաջները: Մեծ քանակութեամբ եկած ձիւնը շատ վնասներ պատճառեց այստեղ շինութիւններին էլ. բաւական թւով կտուրներ փլան կամ շատ ու քիչ վնասվեցան, ի միջի այլոց և մի երկու նաւթաշտեմարաններ: Եղանակի փոփոխութեան հետ քանի օր է սաստիկ ալեկոծվում է Սև ծովը, որով շոգենաւերը ստիպված են լինում օրերով յետաձգել իրանց գնացքները:

Երէկ տեղի ունեցաւ հայ թատերասիրաց երկրորդ ներկայացումը. խաղացին «Երկու սիրահարներ», «Կռուապատճառը ես էի» և «Պառաւներու խրատ» վօդէվիլները: Այս անգամ բացի տ. Մարութեանցից և օր. Աղամեանից՝ մասնակցում էր և տիկ. Միհրանեանց: Արդիւնքի մի մասը նոյնպէս յատկացրած է բացվելի ուսումնարանին:

Մի ուրախալի երևոյթ է նկատվում տեղիս հայերի մէջ, որ չէ կարելի զանցառութեան տալ: Չը նայելով որ Բաթումը ունի բաւական թւով հայ-լուսաւորչական բնակիչներ և չարունակ էլ ամենայն կողմերից հայեր են գալիս այստեղ, սակայն մինչև օրս Բաթումը զուրկ է մի փոքր ի շատէ վայելուչ եկեղեցուց, որովհետև եղած հին, փոքրիկ փայտաշէն եկեղեցին բոլորովին համապատասխան չէ Բաթումի հռչակին: Այս պատճառով թէև տեղիս հայերի մէջ վաղուց ծագած էր մի միտք նոր քարաշէն եկեղեցի շինելու, սակայն այդ մտադրութիւնը մինչև օրս անիրագործելի էր մնացած: Ներկայ ամսի մէկին տարեմուտ առիթով շնորհաւորութիւնների ժամանակ մի շրջանի մէջ տեղիս ծխատէր քահանայ հայր Կոստանդին Տէր-Ստեփանեան իրան յատուկ գեղեցկախօսութեամբ մի առաջարկութիւն արեց այս պակասութեան վրա: Բոլոր ներկայ եղողները մեծ համակրութեամբ ընդունեցին այդ առաջարկութիւնը և խոստացան օգնել իրանց կարողութեան համեմատ, իսկ տեղիս վաճառական Ց. Մ. խոստացաւ կառուցանելի եկեղեցու հիման համար պէտք եղած քարն ու կիրը: Եկեղեցու կառուցանելու համար մի հիմնական գումար կազմելու մտքով պ.պ. Արշակ Ծատուրեան, Վասիլ Փարեմուզեան, Ղազար Տէր-Ղազարեան և Արշակ Շէխեանց ամսիս 5-ին, Քրիստոսի Յայտնութեան տօնի երեկոյեան, աւետիք երգեցողների հետ տնէ տուն մտան, որպէս զի ստացած նուէրները նոյն նպատակին յատկացնեն: Այս ճանապարհով ժողոված գումարը հասնում է 400 ռուբլու: Այսպէս ուրեմն յուսալի է, որ հնարաւոր կը լինի կարճ ապագայում ձեռնամուխ լինել մի վայելուչ եկեղեցու հիմնարկութեան, որի կարևորութիւնը վաղուց զգալի է դարձած: Յուսալի է որ ուրիշ տեղերից ևս շատ բարեսիրտ հայեր չեն զլանայ իրանց նուէրներով օգնելու այս հոգեշահ նպատակին:

Մեր բազմարդիւն բանաստեղծ Գամառ-Քաթիպայի մասին «Մշակի» 2-րդ համարի մէջ տպած լուրը շատ տխուր տպաւորութիւն թողեց տեղիս հայ երիտասարդների վրա: Մի յարգելի պարոնի ձեռներէցութեամբ մտադրութիւն կայ ստորագրութիւն բանալու ի նպաստ նորա: Յուսանք որ յիշեալ լուրը ամենայն տեղ ևս նոյնպիսի տպաւորութիւն արած կը լինի հայերի վրա և անզգայ չենք մնայ դէպի մեր բանաստեղծը: Արդեօք չեն դիմում օրինական ճանապարհով կառավարութիւ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՅՐԵՐ

—Ուրեմն Աստուածատուրը այստեղ չի մնալու, հարցրեց Անեմանը, այս անգամ երկու ձեռքը դնելով քուրսու տակ: Նրան աւելի և աւելի հետաքրքրում էին երեք կանանց խօսքերը:

—Ի՞նչ ունի այստեղ որ մնայ: Բանը գործը Բաքու է: Խանութը թողել է. եկել է որ պսակվի, նշանածը մօր մօտ թողնի ու գնայ: Շատ է շտապում: Ասում է հիմա ընկերս խանութը քանդած կը լինի:

—Աստուածատուրը լաւ պղնձագործ է, ասում են օրեկան երկու մանէթից պակաս փող չէ առնում:

—Այդպէս է, հաստատեց Եղիսաբէթը:

—Մենակ այդ արհեստը չի իմանում, ամեն ինչ ձեռքովը գալիս է. հիւսնութիւն, դարբնութիւն, զինագործութիւն, աւելացրեց միւս կինը:

—Առաջ ջահիլ էր, խելքը բան չէր կտրում. բայց հիմա խելքի է եկել, ասում է մի հինգ տարի առաջ պիտի օտարութիւն գնացած:

Անեմանը կակղեց:

Նրա կիսատ համաձայնութիւնը լսելով, խնամախօսները առաջարկեցին իրանց պայմանները, հաւատացնելով մի և նոյն ժամանակ, որ խնայելու տեղը չէ, պէտք է ուզածները տալ. և մի հիմա կը համաձայնի այդ թեթև պայմաններին: Անեմանը այդքան խօսքերից յետոյ իսկ որ գտաւ, որ բաւական ձեռնտու են պայմանները:

Խնամախօսների ճանապարհ դնելով նա գնաց թոնրատունը, ուր գտնվում էր Սօֆին, ձեռքով նրա մազերն ու գլխի թաշկինակը դրստեց ու եռեկից գցած՝ ներս բերաւ տուն: Աղջիկը խոնարհութեամբ համբուրեց երեքի ձեռքերը և կանգնեց մի անկիւնում ձեռքերը կրծքին դրած: Աստուածատուրի քույրը վեր կացաւ, մօտեցաւ նրան, թաշկինակը վերցրեց, մազերն ու դէմքը լաւ նայելուց յետոյ «Աստուած շնորհաւոր անի» ասաց և օրիորդի մատը մի մատանի դրաւ: Երեք կանայք գնացին, յայտնելով որ փեսացուն երեկոյեան պիտի գայ և տեսնէ հարսնացուին:

Անեմանը մնաց մենակ: Սօֆին թին ձեռքին գնաց գոմը սրբելու: Նրա սիրտը հանգիստ էր: Նա, ինչպէս և միւս դէպքերում, հաւատացած էր, որ այդ այդպէս պէտք է լինէր և ոչ թէ մի ուրիշ կերպ:

Իսկ մայրը երկար մտածում էր թէ ինչ անի: Ո՞վ պէտք է օգնէր նրան: Հարսանիքը շուտով պիտի լինէր, բայց դեռ ոչինչ պատրաստ չէր:

—Ի՞նչ անեմ, թող այդպէս լինի, ասաց նա վերկենալով:

Նա վճռել է տունը ծախել. Ինչ կայ, ասում էր, երկու փեսայ ունեմ, ինքս էլ մի մենակ կին,—ճար չը լինի, մի օր մէկի տանը կապրեմ, միւս օր միւսի մօտ:

Երեկոյին եկաւ Աստուածատուրը: Փեսացուն իրան շատ լաւ էր պահում, սակաւ էր խօսում և շատ խոնարհ էր երևում: Նա էլ մի մատանի տուաւ Սօֆիին:

Անեմանը շատ չը կարողացաւ քնել: Ապագայի յոյսերն էին, որ չէին հանգստութիւն տալիս նրան: Գեղեցիկ յոյսեր:

IV

Անցել էր եօթը թէ ութ ամիս:

Մի ամառնային երեկոյ, երբ նորածին լուսինը դեռ նոր էր մայր մտել, թողնելով իր ետևից մի անորոշ լոյս, Մելքումենց Ալանի դրսի դուռը սաստիկ զարկով փակվեցաւ և երկու մարդ փողոցը դուրս եկան: Նեղ էր այդ փողոցը և դառնվայր. լուսնի թողած անորոշ լոյսը այդ տեղին չէր հասնում. ճանապարհորդներից մէկը յաճախ ընկնում էր դէս ու դէն և բարկացած անէծքներ էր կարդում: Փողոցն էր անիծում նա թէ ումին,—այդ չէր կարելի իմանալ առաջին անգամ: Միայն ձայնը պարզ յայտնում էր, որ այդ դժգոհ մարդը՝ կին է: Միւս մարդը եթէ երբեմն խօսում էր, նրա համար էր որ զգուշացնի անփորձ կնոջը փողոցի վտանգաւոր տեղերից:

—Ջէ՛, երեխաս կը խեղդվի, կը մեռնի, ասաց կինը յուսահատ հառաչելով, երբ նրանք բաւական տեղ էին անցել:

Տեսնելով ընկերոջ լռութիւնը, նա շարունակեց.

—Ո՞ւր գնամ, Աստուած, ումի ձեռքն ու ոտքը համբուրեմ: Մի ճար չը կա՞յ, Յակոբ. ասա, Աստուծոյ սէրին: Ախր դու չը գիտես… տեսնի՛ր ինչ ասաց… Ես աղջկաս օրը լաց եմ լինում, նա փոխանակ իր որդուն խրատելու, ինձ սիրտ դնելու, տեսնիր ինչ ասաց ինձ: Երկինք, փուլ եկ ու անզգամ մարդկանց սպանիր, ջարդիր…

- Յակոբը դարձեալ չը խօսեց, մի քանի անգամ միայն խոր հառաչեց և իր թշերը ուռցնելով ու շրթունքները հուպ տալով, փչեց ծանր կերպով: Դա էլ ցաւակցութեան մի նշան էր:

—Եւ ինչի համար… դեռ երես էլ ունի անաստուածը: Ինչ անեի, Յակոբ, դու էլ գիտես, քեզանից ծածուկ բան չունիմ. երեխաս հի-

նից Թոյլտուութիւն խնդրելու իրագործելու Պատկանեանի յոբելեանը տօնելու մտադրութիւնը:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ԱԴՍՏԱՖԱՅԻՑ

—

Յունվարի 11-ին

Վագոնների պակասութիւնը մեր երկաթուղու փոքր 'ի չատէ նշանաւոր կայարաններում ստեղծեց վերջ ի վերջոյ մի այնպիսի կրիտիական դրութիւն, որ ապրանք ուղարկողներին ստիպեց վերջապէս ամենածայրահեղ միջոցներին դիմելու: Երկու չաբաթ է արդէն, որ Աղստաֆա ստացվող ապրանքները ճանապարհվում են մեծ մասամբ ֆուրգօններով և ուղտերով.... չը նայելով որ դրա համար վճարվում է կրկնապատիկ, քան երկաթուղու սակագինն է, բայց և այնպէս վաճառականի, արդիւնաբերողի համար նա նստում է աւելի արժան, քան երկաթուղով ուղարկվածը:

Ուղղապանը կօնկուրենցիա է անում երկաթուղու հետ...: Ուրմիս լեր Երուսաղէմ...

Քանի օր է ձիւնը առատութեամբ Թափվում է երկնքից բաց տարածութեան մէջ Թափված ցորենների և ուրիշ ապրանքների վրա. մեծ մասամբ ձիւնը նստած է կէս արշին բարձրութեամբ: Ամենքի համար բարեբար արեգակը վաղը կը բարձրանայ երկնակամարի վրա և նրա ճառագայթների տակ մնացած ցորենն էլ կը ծաղկի և բստ աւետարանի՝ մէկին յիսուն, մէկին հարիւր պտուղ կը տայ:

Աչքիդ առաջ ապրանքդ Թափվում է. աչքիդ առաջ համբողը նրան գողանում, Թափում, փչացնում է. աչքիդ առաջ ձիւնը հալվելով ջուրը մի խոխոջուն աղբիւրի պէս ծլծլում է մէշօկներիդ վրայից. իսկ դուք հեռուն նստած ձեռքերդ ծոցում նայում էք այդ բոլորին.... իսկ վաղը դուք «փրախտի» համար գոյնզգոյն հարիւրանոցներ պէտք է տաք:

Մօլլա-Նասրադինը մի անգամ էշը կորցրեց. երբ նա չատ մանգալուց յետ անկարող եղաւ նրան գտնել, հանեց գրպանից 30 կոպէկ և ջուրը գցելով՝ «էս էլ նրա նալողչէքը» աւելացրեց նա:

Ա. Ապրէսեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ ուղարկված է մի երկար նամակ ԳՈՒԲԱՑԻՑ, որի մէջ նամակագիրը նկարագրելով այդ քաղաքում անցեալ դեկտեմբեր ամսի 21-ին կայացած հայ Թատրօնասէրների ներկայացումը, մեծ գովեստով է խօսում Շուշանիկի դերը կատարող օրիորդ Նինա Մարդանեանի խաղի մասին: Երևում է որ օրիորդը բնական արտակարգ տաղանդ ունի: Ներկայացման ժամանակ կլուբի դահլիճը կատարելապէս լի էր: Անտրակտներում պ. Ա. Գրիգորեան ածեց ջութակի վրա, իսկ պ. Ն. Աճեմեան Թառի վրա:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են յունվարի 12-ից, որ այդտեղ եղանակը այժմ ձմեռնային է և քաղաքն ու չրջակայքը ծածկված են ձիւնով:

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են: «Մեզ մօտ խօսում են մի բարեգործական ընկերութիւն հիմնելու մասին, որի չնորհով մենք իբր Թէ կազատվենք զանազան ողորմութիւն հաւաքողներից: Այդ մտադրութեան մասին մինչև անգամ քարոզներ ասվեցան հայոց եկեղեցում և քարոզչի կարծիքով տարեկան 10,000 րուբլի գումարը չատ հեշտ է հաւաքել Բագուի հայերից: Բայց այդ բոլորը, ի հարկէ, դեռ ևս ենԹադրութիւններ են:»

—

Մեզ գրում են որ ԿԱՐՍԻ գաւառապետ պ. Շաղուբաթօվ անձամբ այցելեց այս օրերս Արդինա գիւղը, այդտեղ պատահած փոստային կառապանի գործի մասին քննութիւն անելու համար: Սպանվածը դուխօբօրների ադմանդին էր պատկանում:

—

ԳՕՐԻՑ մեզ գրում են: «Ձեր լրագրի անցեալ տարվայ № 144-ի մէջ տպված «Կրթիչ հաստատութիւնները իրանց նպատակին չեն համում» առաջնորդողը մեծ համակրութեամբ կարդացվեցաւ տեղիս փոքրաթիւ ընԹերցող հայ հասարակութեան մէջ, մանաւանդ յօդուածի այն կէտը, որ վերաբերվում է մեր հոգևորականութեանը: Այո, ուղիղ է յօդուածի այն խօսքը Թէ «եկեղեցին՝ եկեղեցի է ոչ Թէ իր պատերով, այլ իր սպասաւորներով», բայց դժբաղդաբար մեզանում այդպէս չէ և մեր հոգևորականութեան կօնտինգէնտը մեծ մասամբ բաղկացած է Թերուս անձնաւորութիւններից, որոնք անկարող են հոգևպէս և բարոյապէս ղեկավարել իրանց հօտը:»

—

ԹԻՖԼԻՍՈՒՄ եկած ձիւնը քանի մի օր է սկսել է հալվել և այժմ քաղաքի փողոցներում այնպիսի սարսափելի ցեխ է գոյանում, որ քաղաքում անցուդարձ անելը գրեԹէ անհնարին է լինում: Ամբողջ քաղաքում ոչ մի տեղ և ոչ ոք չէ մաքրում փողոցները:

—

Մենք մինչև այժմ չենք հասկանում՝ ինչ միտք ունի ԹԻՖԼԻՍԻ քաղաքային վարչութեան կողմից ամեն ամիս ուտելիքների տակսա հրատարակելը և տպագրելը, երբ առաջին հարկաւորութեան մԹերքների ծախողները երբէք չեն էլ ենԹարկվում այդ հրատարակված տակսայի գներին, անտես են առնում քաղաքային վարչութեան կարգադրութիւնը, բանի տեղ չեն դնում նրան և դարձեալ ծախում են ամեն բան կամայաբար, իրանց ուզած գներով: Բազար գնացողները իւրաքանչիւր օր ամենամեծ անախորժութիւններ ունեն հաց և մանաւանդ միս ծախողների հետ: Երբ առնողը համարձակվում է քաղաքային վարչութեան կողմից նշանակված տակսայի վրա խօսել և պահանջել, որ տակսայի համեմատ ծախեն մԹերքները,—ծախողները պատասխանում են որ «գրօշի» տեղ չեն դնում հրատարակված պաշտօնական տակսան և դարձեալ ծախում են ամեն բան իրանց ուզած գներով:

—

ՇՈՒՇՈՒՑ գրում են. «Նոր նշանակված առաջնորդ Այվազեան եպիսկոպոսի գալու մասին դեռ ոչ մի լուր չը կայ: Երևի նա կը գայ մարտ ամսին: Ցանկալի է, որ առաջնորդը որքան կարելի է չուտ գայ, մանաւանդ որ մարտ ամսին պէտք է կատարվի հոգաբարձական նոր ընտրութիւնը:»

—

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ «Հայոց Բարեգործական ընկերութեան այստեղի ճիւղը ամենախղճալի դրութեան մէջ է Թէ հասարակութեան անտարբերութեան և Թէ գլխաւորապէս՝ վարչութեան անընդունակութեան և անհոգութեան պատճառով»:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են հետևեալը: Երէկ գիշեր, յունվարի 10-ին, կօնօնօվի դահլիճում հայ սիրողները տուեցին մի ներկայացում յօգուտ չքաւոր հայ ուսանողների: Խաղացին Սունդուկեանցի «Քանդված Օջախ» պիեսան: Խաղը չատ վատ անցաւ. բացի պ. Քալանթարեանի աջողակ խաղից Գիժ-Մոզու դերում, միւսների խաղի նկատմամբ մենք բարւոք ենք համարում լռել: Մենք զարմանում ենք Թատրօնասէրների անփոյթութեան վրա: ԵԹէ ներկայացումից յետոյ չը լինէին ակադեմիկոս բարօն Կլօդի դրված կենդանի պատկերները, մենք անչուշտ չատ ծանր տպաւորութեան տակ պիտի դուրս գայինք կօնօնօվի դահլիճից: ՄիԹէ որովհետև ներկայացումը սիրողների ներկայացումն է, և բարեգործական նպատակով,—ուրեմն ներելի է անփոյԹ կերպով պատրաստել պիէսան և անփոյԹ կերպով խաղալ: Բայց Պետերբուրգի ամբողջ հայ կօլօնիան ներկայ էր դահլիճում և ի միջի այլոց մենք նկատեցինք օԹեակներից միում մեր յայտնի նկարիչ՝ Այվազօվսկուն: Ներկայացման եկամուտը, իմ կարծիքով, եղած կը լինի 1500 րուբլուց աւելի:»

—

Լօռու ՇԱՀՆԱԶԱՐ հայ-կաթօլիկ գիւղից մեզ գրում են: «Յունվարի 10-ին մեզանից բաժանվեցաւ, գնաց Թիֆլիս և այնտեղից դէպի Կ. Պօլիս մեր բազմավաստակ հոգևոր հայրը, Սարգիս վարդապետ Նալբեան, որ իր տասն տարվայ քրտնաջան և անխոնջ աշխատութիւններով մեծ օգուտներ ցոյց տուած է մեր հասարակութեանը և սիրելի եղած է մեր մէջ:»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Այս տարի Ջրօրհնէքի հանդէսը կատարվեցաւ սովորական չքեղուԹեամբ: Հանդիսին առանձին փայլ էր տալիս սրբազան Սուրէնեանցի կարգադրութեամբ հայոց հոգևորականութեան կանոնաւոր ընԹացքը դէպի Հրազդան (Զանգու) գետը: Չը նայելով սարսափելի ցրտին, մինչև տաս մարդ՝ ջուրը օրհնելու ժամանակ նետվեցին գետը:»

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ հաղորդում են յունվարի 14-ից, որ մօտ միջոցներս այդտեղ ալիւրը և ցորենը սկսեցին զգալի կերպով Թանգանալ. ալիւրը բազարում ծախվում է 75 կոպէկով պուդը, իսկ ցորենը 70—75 կոպէկով: Գնողները այդ Թանգութիւնը ժողովրդին զգալ չը տալու համար իրանց առևտուրը գաղտնի են կատարում:

—

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են: «Անտանելի ցրտերը չարունակվում են այստեղ, այնպէս որ մարդ դժուարանում է տանից դուրս գալ, նոյն իսկ գործով: Առևտուրը չատ ընկած դրութեան մէջ է և մեր վաճառականները դրամական սաստիկ նեղութեան մէջ են: Ցանկալի է որ վերջապէս մտածէին մեր վաճառականները ընդհանուր ոյժերով հիմնել մի հասարակաց դրամարկղ, որով միմիայն կարելի կը լինի մեզ համար դուրս գալ առևտրական կրիզիսից, տնտեսական ճգնաժամից:»

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ «Հիւսիսային գործակալութիւնը» մեզ հեռագրում է հետևեալը: «Ստավրօպօլի նահանգապետի բացատրութիւնը,—որ այդ նահանգի գիւղացիները խոստովանվում են իր արած առաջարկութեան օգտակարութիւնը՝ հասարակական ցանքսեր մտցնելու մասին և այդ նպատակով էլ իրանց հասարակական հողերից բաժին են հանում,—արժանացաւ Թագաւոր կայսրի ամենաողորմած ուչադրութեանը, հետևեալ մակագրութեամբ՝ «չատ մխիթարական է»:

—

ՄՕՍԿՎԱՅԻ ազնուականների ժողովը բանալիս Մօսկվայի գեներալ-նահանգապետը, ինչպէս հեռագրում է «Հիւսիսային գործակալութիւնը», մի ճառ ասաց, որի մէջ յայտնեց, որ ազնուականուԹիւնը այժմ իր ոտքերի տակ հաստատ հող ունի և իր ճանապարհը չատ որոշ է: «Շնորհիւ Թագաւոր կայսրի անձնական համոզմունքների, ասաց գեներալ-նահանգապետը, և Նրա հաստատ կամքի, մեր հայրենիքի հասարակական կազմը ամրապնդվել է: Ազնուական դասակարգը լաւ գիտէ իր քաղաքացիական իրաւունքները և պարտաւորութիւնները»: Ցայտնելով դրանից յետոյ, որ ազնուականութեան, իբրև բարձր դասակարգի, անմիջական պարտաւորութիւնն է լինել հաւատարիմ պահապան հայրենիքի և գահի համար, գեներալ-նահանգապետը մատնանիշ արեց ազնուականութեան հասարակական գործունէութեան վրա, ի միջի այլոց, ազնուականների կալուածների համար հիմնված կրեդիտի վրա, կալուածատէրերի տնտեսութեան բարւոքման և երիտասարդութեան կրԹութեան վրա:

—

«Հիւսիսային գործակալութիւնը» հեռագրում է: «Չորեքչաբթի օր, ֆինանսների մինիստրուԹեան կառավարչին ներկայացաւ երկաթագործների պատգամաւորութիւնը, որը ներկայացրեց մի յայտարարութիւն, որով առաջարկվում է չուտափոյթ կերպով մեծացնել Թուջի, երկաթի և պողպատի վրա դրած մաքսային տուրքը:»

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են. «Ինչպէս երևում է գրականական երեկոները այստեղ այս տարի դժուար Թէ աջողվեն, եԹէ առանձին հոգատարութիւն չը դարձնվի: Գլխաւոր արգելքներից մէկըն էլ այն է, որ յարմար չէնութիւն չը կայ: Ընկերութեան չէնութիւնն էլ հրդեհի պատճառով անյարմար է դարձել գրականական երեկոներ կազմելու համար: Բայց կարծում ենք, որ եԹէ երեկոներին մասնակցել ցանկացող երիտասարդները կամենան անպատճառ իրագործել այդ օգտաւէտ մտադրութիւնը,—այն ժամանակ կարելի է յուսալ, որ բոլոր արգելքները կանհետանան:»

—

Մեզ գրում են ԲԱԳՈՒԻՑ հետևեալը: «Նաւթային արդիւնաբերութեան չնորհիւ Բագուն իր չրջակա-

---

ւանդացել էր գետինը մտած մարդիկը. ես ինչ գիտեմ ինչ հիւանդութիւն էր. կռների, կրծքի վրա ոսպի նման վէրքեր են դուրս եկել: Ինձ ասում են ինչու ես տարել բժչկի մօտ, Թողնէիր մեռնէր, բայց Աստուածատուրի անունը դուրս չընկնէր: Ես մեղք ունեմ, Ցակոբ, ինչ անէի. Թողնէի որ երեխաս մեռնէր:

—Աստուածատուրի անունը նոր չէ դուրս ընկել, խօսեց վերջապէս Ցակոբը քԹի տակ:

—Հէնց այդ ասա, քեզ մատաղ, այդ ասա. քանի անգամ է հարբած տուն բերվել և քանի անգամ է օրը սևացած երեխայիս ուսերը ջարդել: Ա՛խ, Աստուած, քեզանից խնդրածս սա է, որ այս բանի պատճառ դառնողի որդին էլ այս տեսակ ցաւերի մէջ տապակվի մինչև կեանքի վերջը: Ասացին, ասացին, խաբեցին, հաւատացրին Թէ Բագու առևտուր ունի, խանուԹ ունի: Ո՞ւր է, բոլորն էլ սուտ: Երեխաս որ միտս է ընկնում, գլուխը կախ արած, լուռ ու մունջ, լեզու չունի որ լսածին պատասխանի.... Բաս ես այդպէս եմ պահել Սօֆիին....

Եւ կինը սկսեց լաց լինել. նա և գնում էր, և դառնապէս հեկեկում ու անորոշ խօսքեր ասում: Ցակոբը աչխատում էր հանգստացնել նրան, որքան կարողանում էր: Բայց Աննմանը լաց լինելով մտաւ տուն:

Ցակոբը Աննմանի մեծ փեսան էր. սրան էր ծախվել տունը և սա էր Սօֆիի հարսանիքի բոլոր ծախքերն անողը: Այժմ Աննմանը ապրում էր նրա մօտ: Եւ որովհետև Ցակոբը խոհարար լինելով մեծ վաստակ չունէր, Աննմանը լուացք անելով, հաց Թխելով էր իր ուտելի հացը ձեռք բերում:

Ցակոբն ու Աննմանը, ինչպէս տեսանք, գալիս էին Ալանի տանից: Նրանք գնացել էին մի բացատրութիւն ստանալու համար, բայց Ալանը և նրա կինը այնպիսի աղմուկ էին հանել, որ փեսայ ու զոքանչ մնացել էին սառած: Ալանը չափազանց չատ նախատել էր Աննմանին, հայհոյել էր նրան էլ, նրա աղջկան էլ, ասել էր Թէ պիտի սովամահ անէ աղջկան, որ իր որդու անունը խայտառակել է:

Ցակոբը, իրաւ է, մի քանի խօսք էր ասել, բայց ով էր դրան լսում. ասում էին քո խելքի բանը չէ, դու գնա ամանդ լիզիր: Իսկ մի ուրիշ պաշտպան չունէր Աննմանը. նա իր մարդում հազար ու մի պահանջներ դրած եկել էր այդ տունը, միայն Ցակոբի պէս պաչտպանի վրա յուսալով և նրանով միայն հպարտանալով:

Տեսնելով որ խօսք հասկացնել չէ լինում, Աննմանը մի կերպ խնդրել, աղաչել էր, որ իր աղջիկը իրան տան, ինքը տանի պահի: «Ի՜նչ.... գոռացել էր Ալանը. բաւական չէ որ տղիս է խայտառակել, հիմա էլ ուզում է ինձ խայտառակել: Թող այստեղ վեր ընկնի, մեռնի: Դու նրա հետ գործ չունես: Եւ եԹէ մի անգամ էլ այս դռնով մտնես, իմացիր որ մազերիդ բռնած դուրս եմ փողոցը»: Եւ այն իսկ միջոցին, երբ Ալանը այդպէս էր խօսում, միւս սենեակից մի քնաԹաԹախ ձայն գուում էր. «Թողէք, Թողէք, ես գնամ տեսնեմ ինչ են ուզում.... այս օրս գցելը դրանք են, Թողէք....» և յետոյ այնպիսի մի հայհոյանք, որից մարդու ուղեղն էր տակն ու վրա դառնում: Այդ ձայնը այնքան սարսափելի էր, որ Սօֆին համարձակվեցաւ իր սկեսրայրի մօտ խօսել. արտասուքից խեղդվող ձայնով նա աղաչեց մօրը դուրս գնալ:

—

Գիչեր է: ՄուԹ սենեակում ընկած է Սօֆին անկողնի մէջ, ծանր անքում է: Նրա բերանը սաստիկ այրվում է, ամբողջ մարմինը կարծես ծանր մուրճով ծեծել, փչրել են: Ոչ քնել է կարողանում, ոչ հանգստանալ: Ներքին հուրը սատկանում է, նա խմել է ուզում:

Սենեակի դուռը բացվեց, սկեսուրը ճրագը բռնած ներս մտաւ: Նա մինչև անգամ չը նայեց դէպի Սօֆիի կողմը, կարծես սենեակում ոչ ոք չը կար: Վերցնելով անկիւնում դրած կաթսան, նա կրկին ոչ մի տեղին չը նայելով դուրս գնաց:

Անցաւ մի ժամ: Հիւանդը դողդողալով նստեց անկողնի մէջ, մերկ Թևերը տարածեց մԹութեան մէջ և մի ծանր ախ քաչեց: Այդ ժամանակ նրա աչքն ընկաւ պատուհանի վրա. նա տեսաւ որ լուսնի չողքը լուսաւորել է պատուհանի մի փոքրիկ մասը և այդտեղ դրած փոքրիկ կաւէ ամանը: Ամանի կողքը չողչողում է, այդ պարզ տեսնում է Սօֆին. և այնքան սիրտը ցանկանում է այրվող լեզուն դնել այդ չողչողուն կողմի վրա. նա գիտէ, որ դա ջրի աման է: Երկար նայեց, նայեց վերջապէս քարչքարչվելով գնաց, վերցրեց ամանը և սկսեց ագահութեամբ ծծել: Ջուր էր այն, նա բոլորը խմեց. զուարԹացաւ, յետ դառաւ, կանգնեց անկողնի մօտ: Մի րոպէից յետոյ դարձեալ ծարաւը սկսեց տանջել: Գլուխը կրկին սկսեց այրվել:

—Իմ ճարս էլ Աստուած, ասաց նա մի Թոյլ ձայնով, վայր ընկաւ անկողնի վրա և Թաղվեց վերմակի տակ...

Լէօ

ներով այնպիսի դրութեան է հասել, որ Բաղուի մէջ մեծ կարիք կայ տեղական մի փոքրիկ լրագրի, որը նուիրված լինէր զխաւորապէս տեղական հարցերին և ուսումնասիրէր տեղական կեանքը: Այժմ Բաղուի մէջ հրատարակվող երկու թերթերը չեն կարողանում ծառայել իրանց կոչմանը. նրանից մէկը՝ համաձայն իր պրոգրամին միանգամայն մասնագիտական է և նուիրված է միմիայն նաւթային արդիւնաբերութեան խնդրին. իսկ միւս ամենօրեայ թերթը՝ իր ուղղութեամբ, իր բռնած դիրքով չէ կարողանում ծառայել տեղական լրագրի կոչմանը: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ այստեղ վերջապէս հիմնվի մի կանոնաւոր տեղական լրագիր»:

—

Վրաց «Իվերիա» լրագիրը լսել է, որ մի հարուստ կալուածատէր մտադիր է Մցխեթի կուսանոցին կից հիմնել մի օրիորդական դպրոց, որի զխաւոր նպատակը պէտք է լինի սովորեցնել աշակերտուհիներին կանանցին անտեսութիւն և առհասարակ տնային գործնական պարապմունքներ: Դպրոցի մէջ կընդունվին զխաւորապէս գիւղացի աղջիկներ:

—

Առաջիկայ գարնանը Պետերբուրգում կառուցվելու է արձան ռուսաց նշանաւոր բանաստեղծ Ժուկովսկու յիշատակին:

—

«Нов. Обозрѣн.» լրագիրը լսել է, որ Կովկասի հանքերը, մանաւանդ ոսկնձի հանքերը մանրամասնաբար ուսումնասիրելու համար Բոռչիլդի ֆիրման ուղարկել է այստեղ երկու մասնագէտներ: Թէ ինչ մտադրութիւն ունի Բոռչիլդ դէպի այդ գործը,—առ այժմ յայտնի չէ:

—

Փետրվարի 1-ին, կիրակի օր, Թիֆլիսի ժողովարանում նշանակված է պարահանդէս՝ յօգուտ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան:

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են: «Տեղիս գիմնազիայում այս տարի ուսումն աւարտող չքաւոր աշակերտների օգտին յունվարի 4-ին ռուսաց թատրոնասէրների մի խումբ տուաց մի ներկայացում, որից գոյացել է, որքան յիշում ենք 395 ր. 55 կ. արդիւնք: Ներկայացնողները աջողութեամբ կատարեցին իրանց դերերը և անտրակտներում երգող և նուագող խումբը, որ բաղկացած էր գիմնազիայի աշակերտներից, նոյնպէս մեծ աջողութիւն ունեցաւ: Մի առանձին ուրախութիւն էր երևում թէ գիմնազիայի պ. դիրեկտորի և թէ հանդիսականների դէմքի վրա, այն պատճառով, որ բացի երեկոյթի աջող կերպով անցնելուց, մեր քաղաքի առաջին հարուստը, պ. Նաբաթեան այդ երեկոյ խոստացել էր նուիրել աւարտող չքաւոր աշակերտների օգտին 100 ռուբլի: Պ Նաբաթեանին թէ դիրեկտորը և թէ ուրիշները յայտնեցին իրանց շնորհակալութիւնը: Շատերի բերանից լսվում էր որ՝ գէթ այսուհետև միւս հարուստները հետևէին նուիրատուի օրինակին: Բայց որչափ էր ամենքի զարմանքը, երբ միւս օրը քաղաքում լուր տարածվեց, որ պարոնը 100 ռուբլու փոխարէն մի նամակի հետ միասին ուղարկել էր գիմնազիայի պ. դիրեկտորին միայն 11 ռուբլի 25 կոպ. փող, յայտնելով որ մնացած 88 ռուբլի 75 կոպէկ, դիրեկտորը բարեհաճի պահանջել 1879 թուին տվի ժամանակ կազմված ցորենի կոմիտէի գանձապահ պ. Լիսիկեանից, որ իրան, պ. Նաբաթեանին իբր թէ պարտ էր մնացել այդ գումարը: Պարոնի վարմունքի շարժառիթները դժուար է բացատրել. գուցէ պարոնը բօպէական ողորմութեան տակ է խոստացել նուիրել 100 ռուբլին, իսկ միւս օրը փոշմանվելով, և այնուամենայնիւ չը կամենալով իր խոստմունքից յետ կանգնել, մի և նոյն ժամանակ չուզեց նադդ վճարել խոստացած գումարը, կամ գուցէ ուզեց իր վարմունքով միմիայն հրապարակապէս վիրաւորել պ. Լիսիկեանցին: Ինչ և իցէ մի տարօրինակ բարերարութիւն է սա.... Եթէ պ. Լիսիկեան ճշմարիտ էլ պարտ լինէր պ. Նաբաթեանին, թող ինքն իր պարտքը նրանից պահանջէր,—բայց դա դեռ չը տեսնված բարերարութեան ձև է՝ առաջարկել մի հիմնարկութեան իր ն ի ս ի ա ն ե ր ը ժողովել բարեգործական նպատակով: Իսկ թէ ճշմարիտ Լիսիկեան պարտ է թէ պարտ չէ Նաբաթեանին 88 ր. 75 կ., այդ հարցը, ցորենի կոմիտէի գործին տեղեակ լինելով, ես կաշխատեմ պարզել մի այլ անգամ:»

—

ԵԱԼՏԱՅԻ Նիկիտեան այգեգործական դպրոցի մի ուսանող գրում է մեզ հետևեալը: «Շատ ուրախացանք իմանալով որ գինեգործ-մասնագէտ պ. Մելիք-Շահնազարեան սկսել է պատրաստել այնպիսի գինի, որի նմանը դեռ Ղարաբաղում ոչ ոք մինչև այժմ խմած չէ եղել (?). Արդեօք զարարաղցիք մինչև այժմ քացախ էին խմում: Բայց որքան էր մեր զարմանքը, երբ աւելի ճիշդ տեղեկութիւններ ստանալով իմացանք հետևեալը: Յայտնվում է որ յիշեալ մասնագէտ-գինեգործը մի ու կէս ամսվայ մէջ պատրաստել է այնպիսի գերազանց գինի, որի նմանը շուշեցիները առաջին անգամ են խմում և արդէն վճռել են վաճառահանել արտասահման և որ պ. մասնագէտի պատրաստած գինին այն առաւելութիւնն ունի, որ ստացված է վատ պայմանների մէջ մեծացած խաղողից: Մարդս հասկացողութիւն անգամ չունենալով գինեգործութեան մասին, դարձեալ կարող է պարզ եզրակացնել հետևեալը. ա) որ մէկ ու կէս ամսվայ ընթացքում անկարելի է պատրաստել գինի, բ) որ վատ պայմանների մէջ մեծացած խաղողից դժուար է ստանալ գերազանց գինի, գ) որ մէկ ամսվայ, բոլորովին մանուկ գինուն ճանաչել և շուտով վերջնական վճիռ տալ նրա յատկութեան մասին, անկարելի է և վերջապէս դ) որ «շիրան», այսինքն մի ու կէս ամսվայ գինին, դեռ չէ կարող այնքան որոշ յատկութիւն ունենալ, այնքան որոշ կերպարանք ընտանալ, որ գտնվին միամիտ մարդիկ, որոնք չտալին վճռել՝ գինու կերպարանքը դեռ չը ստացած շիրան վաճառահանել արտասահման:»

—

Յունվարի 14-ից մեզ գրում են ՂՈՒԲԱՅԻՑ որ այդ օրը թէ Ղուբայում և թէ քաղաքի շրջականերում սկսեց սաստիկ ձիւն գալ:

—

ԵԱԼՏԱՅԻՑ մեզ գրում են: «Տեղս երկար ամառնային եղանակներ անելուց յետոյ, վերջապէս յունվարի 6—7-ին թէ քաղաքում և թէ շրջականերում սկսեց ձիւն գալ: Բայց հետևեալ օրը եղանակը կրկին պարզվեցաւ և պարզ օրեր նորից սկսվեցան թէև բարակ քամու հետ:»

—

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը հաղորդում է մեզ, որ յունվարի 11-ին Թիֆլիսի ժողովարանում յօգուտ յիշեալ ընկերութեան տուած պարահանդէսից և վիճակախաղից դոյացել է ընդհանուր մուտք 2741 ր. 10 կոպ., ծախս եղել է 237 ր. 10 կ., իսկ զուտ արդիւնք մնացել է 2504 ռուբլի:

—

Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը: «Այս օրերս վախճանված Դարիա Յովհաննիսեան Պրօտոպօպեանցի որդիքը, փոխանակ մեռելահացի՝ նուիրել են յօգուտ Կովկասեան հայոց Բարեգործական ընկերութեան 100 ռուբլի, հանգուցեալի յիշատակին: Ընկերութեան խորհուրդը պարտաւորութիւն է համարում հրապարակաւ յայտնել իր շնորհակալութիւնը մեծապատիւ Պրօտոպօպեաններին:»

—

«Արձագանք» շաբաթաթերթը հաղորդում է, որ փետրվարի 14-ին Թիֆլիսի ժողովարանում կը կայանայ մի նուագահանդէս յօգուտ հայոց թատրոնական ֆոնդի:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲՈԼԳԱՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ

—

Փոքրիկ Բոլգարիան դեռ շարունակում է զուրկ մնալ քաղաքական հանգստութիւնից, Սօֆիայի իշխանական դահը դեռ չունի իր դահակալը: Ոչ այդ երկրի ներքին քաղաքական յուզմունքները, ոչ Սօֆիայում տեղի ունեցած խառնակութիւնները, ոչ բոլգարական պատգամաւորութեան ճանապարհորդութիւնը, և ոչ պետութիւնների բանակցութիւնները՝ դեռ անկարող եղան հանել Բոլգարիան իր անորոշ դրութիւնից, այն Բոլգարիան, որ յիրաւի կարօտ է խաղաղ կուլտուրայի և տընտեսական մտաւոր զարգացման: Ամենայն օր հեռագիրը և եւրօպական լրագիրները բազմատեսակ և մեծաքանակ տեղեկութիւններ են բերում այդ հարցի մասին. Բոլգարիան դարձել է ներկայումս եւրօպական դիպլօմատիայի և լրագրութեան զբաղմունքի ամենագլխաւոր նիւթը. մեր դարուս այս վերջին քառորդի համար կարծէք այդ փոքրիկ աղգութեան պատմութիւնը մի կարմիր դիծ պէտք է կազմի.—ամեն կողմ խօսում են, հարցեր են առաջարկում, սպառնալիքներ են տեղի ունենում. եւրօպական պետութիւնները քաղաքական հայեացքներ են յայտնում, և վերջապէս իշխան Ալէքսանդր Խաալիա գնալով՝ կարծէք ուզում է մօտենալ իր անցեալ յիշատակների սիրելի վայրերին,—բայց և այնպէս, այդ բոլոր աղմուկներից յետոյ էլ, Բոլգարիան նոյն դրութեան մէջ է, ինչ դրութեան մէջ որ էր սրանից երկու, չորս, վեց, ութ ամիս առաջ. էլի շարունակվում են հալածանքները, էլի կուսակցական յուզմունքներ, ձերբակալութիւններ. էլի իշխանի խնդիրը մնում է չը լուծված.... Եւ դուցէ բոլգարական աղգի օտար պետութիւնների վրա ունեցած յոյսը օրից օր թուլանում է: Ֆրանսիայի և Գերմանիայի յարաբերութեան վերջին աղմկալի լուրերը՝ աւելի անորոշութեան մէջ գցեցին Բալկանի խնդիրը և այդպիսով ներկայ քաղաքական մի քանի դործերի դոյութեան պատճառը մառացվում է կարծէք: Կենտրոնական Եւրոպայի լարված վիճակը, Բիսմարկի ճառը, գերմանական ըէյխստագի բռնած դիրքը, Աւստրիայի և Ռուսաստանի յարաբերութեան խնդիրը, և Անգլիայում մինիստրական ճգնաժամը՝ այնպիսի մի դրութիւն են ստեղծել, որ բոլգարական գործերին սպասում է մի ուրիշ տեսակ ելք: Վերջին հեռագրից երևում է, որ, եթէ Թիւրքիան ընդունակ լինի և կարողանայ, կարող է վճռական դեր խաղալ բոլգարական հարցի մէջ: Լօնդոնից եկած հեռագիրները, որոնք հաղորդեցին գահական ճառի բովանդակութիւնը, ցոյց են տալիս, որ Բրիտանիան չէ ուզում եւրոպական խաղաղութեան խանգարման պատճառ լինել, թէև ցաւում է, որ Բոլգարիայում տեղի ունեցան մի շարք տխուր անցքեր, և իշխան Ալէքսանդր ստիպվեցաւ հեռանալ Բոլգարիայից: Բիսմարկ իր ճառի մէջ որոշակի յայտնեց, որ Գերմանիան ոչինչ կապ չունի Բոլգարիայի հետ, և նրա պատճառով Ռուսաստանի հակառակ մի քայլ անգամ չի անի: Աւստրո-Ունգարիան տրամադրութիւն ունի խաղաղ կերպով վերջացնելու բալկանեան կրիզիսը, և ցանկութիւն է յայտնում արձագանք տալու Բիսմարկի յայտնած մտքերին: Գերմանական մի քանի լրագիրներ հաղորդում են՝ որ նոր տարվայ առիթով աւստրիական Ֆրանց-Յոսէֆի կայսրը մի ամենաբարեկամական հեռագիր է ուղարկել Ռուսաց Թագաւոր Կայսրին, ցանկութիւն յայտնելով անխախտ պահել խաղաղութիւնը և բարեկամութիւնը:

Երբ Բոլգարիան ստիպված է ականջ դնել օտար պետութիւնների ցանկութիւններին, երբ նա՝ իր գործերի վճիռը և հաստատութիւնը սպասում է դրսից, այդ դէպքում եւրոպական պետութիւնների այժմեան տրամադրութիւնը հաւանական է, որ բաց կանի Բոլգարիայի գործերի համար մի նոր ճանապարհ: Եթէ հաւատանք եւրոպական մի քանի լրագիրների հաղորդած տեղեկութիւններին, Թիւրքիան արդէն յայտնել է, որ ինքը Բոլգարիայի այժմեան կառավարութիւնը հակառահամանդրական է համարում: Եւ եթէ այդ կարծիքը ընդդիմադրութիւն չի գտնի եւրոպական մի քանի կաբինետներում, այն ժամանակ հարկաւոր կը լինի քանի մի փոփոխութիւններ անել Սօֆիայում: Ներկայ հանդամանքների մէջ խնամակալութիւնը չէ կարող առաջվայ նման խիստ լինել իր ցանկութիւնների մէջ, և ստիպված կը լինի մի քանի զիջողութիւններ անել, և գուցէ այն ժամանակ խնամակալութեան մէջ կը մտնակցեն և ընդդիմադրական կուսակցութեան ներկայացուցիչները, և եթէ Ցանկով կը վերադառնայ Սօֆիա, այն ժամանակ, անկասկած, աղգային մեծ ժողովի կարծիքների մէջ էլ փոփոխութիւններ կը մտնեն: Անգլիական թագուհու գահական ճառից յետոյ եւրոպական պետութիւնները աւելի որոշ կարող են իրանց կարծիքները յայտնել, և այդպիսով գուցէ մի փոքր ժամանակից յետոյ կարելի կը լինի գէթ մօտաւորապէս ձևակերպել, թէ արդեօք ինչ վճիռ կարող է տալ նոր աղգային ժողովը, ինչ կը լինի խնամակալութեան ապագան, և ով կարող կը լինի բարձրանալ Սօֆիայի իշխանական դահի վրա, որը շրջապատված է քաղաքական ներքին և արտաքին վտանգներով:

ՍԱԼՍԲԸՐԻԻ ԿԱՐԾԻՔԸ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

Լօրդ Սալսբերի լօրդերի ժողովում մի ճառ խօսեց եւրոպական քաղաքականութեան այժմեան դրութեան մասին՝ արտայայտելով մի և նոյն ժամանակ բրիտանական կառավարութեան հայեացքները: Ահա թէ ինչ է հեռագրում մեզ «Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» Լօնդոնից, յունվարի 16-ից, այդ ճառի բովանդակութեան մասին: «Բատենբերգի վերահաստատութեան մասին տարածված լուրերը անհիմն են, ասաց Սալսբերի. նրան երկրորդ անգամ ընտրելը անդործնական է համարվում, և ոչ մի կաբինետ, մանաւանդ Լօնդոնի կաբինետը, չէ ձգտում այդ բանին: Բալկանեան թերակղզու վերաբերութեամբ՝ Անգլիան զեկավարվում է այն պարտաւորութիւններով, որոնք բղխում են Բերլինի դաշնագրից, և իր աւանդական քաղաքականութեամբ, որի նպատակն է Բալկանի քրիստոնեայ աղգաբնակութեան քաղաքական անկախ դրութեան հասցնել:

Անգլիան չէ ձգտում առանձին աղդեցութիւն ունենալ Բալկանեան թերակղզու վրա, և ոչ թէ միայն չէ մերժում Ռուսաստանին ունենալու իր օրինական աղդեցութիւնը, այլ մինչև անգամ ուրախ կը լինէր, եթէ Ռուսաստանի օրինական ցանկութիւնները իրականանային, յիշեալ պայմանները անձեռնմխելի պահելով: Անգլիան անկարող է միայն հաւանութիւն տալ այն ջանքերին, որոնք ձգտում են հաստատել Բալկանեան թերակղզու վրա Ռուսաստանի գերիշխանութիւնը, որովհետև այդ բանը ոչ միայն կը վնասի իր աղդեցութեանը, այլ և սպանիչ հետևանքներ կունենայ եւրոպական շահերի համար»:

Խօսելով դրանից յետոյ պատերազմին վերաբերեալ տարածված վիրաւորիչ լուրերի մասին, Սալսբերի ասաց, որ դէպի այդ լուրերը զգուշութեամբ պէտք է վերաբերվել. բայց և այնպէս, չէ կարելի չը նկատել, որ խաղաղութեանը վտանգ է սպառնում՝ սաստիկ զինաւորութեան պատճառով: Անհրաժեշտ է արթուն լինել. բայց այդ արթնութիւնը կարող է առաջ բերել կասկածոտութիւն. իսկ կասկածոտութիւնը կարող է ընդհարումների պատճառ դառնալ:

Բայց և այնպէս չը կան դրական հիմունքներ ապացուցանելու համար, որ այժմ վտանգը աւելի մեծ է, քան թէ սրանից մի քանի ամիս առաջ:

Փարիզի և Բերլինի բրիտանական դեսպանների ստացած տեղեկութիւններից երևում է, որ իրերի դրութիւնը աւելի խաղաղասիրական լնաւորութիւն ունի:

Վերջացնելով իր ճառը, Սալսբերի յոյս յայտնեց, որ Եւրոպան դերծ կը մնայ այնպիսի թշուառութիւնից, որպիսին է ամենալուսաւորված պետութիւնների զինաւորված ընդհարումը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լօնդոնից հեռագրում են հետևեալ ուշադրութեան արժանի լուրը. «Այստեղի գործարաններից մէկի մէջ բանող երեք դերմանացի բանտրներ ստացան գերմանական հիւպատոսարանից մի հեռագիր, որով հրամայվում է պատրաստ լինել 24 ժամից յետոյ վերադառնալ Գերմանիա՝ և մտնել իրանց յատկացրած զօրաբաժինը՝ զինուորական ծառայութիւնը շարունակելու համար: Ասում են, որ այդպիսի հեռագիրներ ուղարկված են Անգլիայում ապրող բոլոր գերմանահպատակներին»:

—Լօնդոնից «Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը» մեզ հեռագրում է. Ջերչիլ հաղորդեց, որ նա հրաժարական տուաց այն տարաձայնութիւնների պատճառով, որ նա ունեցաւ զինաւորվելու խնդրի մասին: Նա կարդաց Սալսբերիի հետ ունեցած իր գրագրութիւնները, որոնցից երևեցաւ, որ Սալսբերի պնդում էր, որ Անգլիան պէտք է զինաւորվի, պատերազմի պատրաստ լինելու համար. մինչդեռ Ջերչիլ այն կարծիքն էր յայտնում, որ հեռատես քաղաքականութեան հետևելով, Անգլիան կարող է հեռու մնալ դործերի խճճվելուց, և որ Սալսբերիի քաղաքականութիւնը սպառնում է վտանգ Անգլիային:

—Վիէննայից հեռագրում են, որ բոլգարական աղգային ժողովը կը գումարվի այն ժամանակ, երբ պատգամաւորութիւնը կը վերադառնայ Պոլսից Սօֆիա:

—Բոլգարական կառավարութիւնը ձեռք է բերել արդէն յիսուն հազար մաղզինային հրացաններ:

—Գերմանիայում շարունակվում են բուռն կերպով ընտրողական ագիտացիաները և մրցումները: Վինդհօրստ հրատարակեց կենտրոնի կուսակցութեան ընտրողական մանիֆեստը: Նոյն օրը փառաւոր կերպով տօնվեցաւ Վինդհօրստի ծընընդեան 75-ամեակը, որի ժամանակ Վինդհօրստ յայտնեց, որ կենտրոնի կուսակցութիւնը իրան այժմ շատ զօրեղ է զգում:

—Յունվարի 6-ին, Ստոկհոլմում տեղի ունեցաւ րիկստագի բացումը. Օսկար թագաւորը ուրախութեամբ յայտնեց, որ պետութեան բիւջէտը շատ լաւ դրութեան մէջ է: Թագաւորը իր ճառի մէջ մի խօսք անգամ չասեց Եւրոպան ներկայումս յուզող քաղաքական հարցերի մասին:

—Սօֆիայից հեռագրում են, որ Թիւրքիան պահանջում է բօլգարական իշխանութիւնից՝ պատժել Ցանկովին վիրաւորող անձանց:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լուդվիկ Վինդհօրստ, գերմանական Րայխստագի կենտրոնի կուսակցութեան պարագլուխը, ոչ թէ միայն լաւ հռետոր է, բայց և շատ սրամիտ մարդ է: Վինդհօրստ շատ փոքրիկ հասակ ունի և երբ նա դեռ ուսանող էր, մի օր մի յանդուգն պարոն դիմելով նրան ասում է՝ «Ձեզ պէսներին ես իմ գրպանումս կարող եմ թագցնել»

—Դուք աւելի լաւ կանէք ինձ ձեր գլխում տեղաւորելու, քանի որ ձեր գլխում դատարկ տեղ շատ կայ, պատասխանեց Վինդհօրստ:

* * *

Գերմանիայում կանանց համար բացվեցաւ աշխատանքի մի նոր ասպարէզ: Մի քանի նշանաւոր վաճառականական տներ յանձնեցին կանանց, այսպէս կոչված, շարժական գործակատարների պաշտօն: Այդպիսի կին-գործակատարները, որոնք գիտեն մի քանի լեզուներ, ճանապարհորդում են զանազան կողմեր, և աշխատում են տարածել այս կամ այն վաճառականական տան կամ գործարանի ապրանքները:

* * *

Պետերբուրգում շուտով պէտք է քննվի մի գործ, վերջին խաղարկութեան մի տոմսակի պատճառով: Երկու հոգի, որոնցից իւրաքանչիւրը ներքին փոխառութեան մի մի խաղարկութեան տոմսակներ ունէր, իրանց մէջ պայման են կապում, որ եթէ իրանցից մէկի տոմսակը կը տանի, տարած գումարը իրանց մէջ կիսեն: Այժմ մէկի տոմսակը տարել է մի մեծ գումար. բայց յանկարծակի հարստացած պարոնը մերժում է իր ընկերոջը և չէ կամենում կատարել իր գրաւոր պայմանը, պատճառ բերելով, որ ընկերոջ տոմսակը վաղուց է տ ի ր ա ժ է դուրս եկել, և չէ էլ նորոգված: Այդ գործը պարզելու համար՝ այժմ դատաստանական քննութեան կարիք կայ:

* * *

Կարլսրուէում բացված է մի խ ո հ ա ր ա ր ա կ ա ն ուսումնարան բարձր շրջանի կանանց համար: Ուսումնարանը գտնվում է Բադէնի մեծ իշխանուհու հովանաւորութեան ներքոյ: Ուսումնարանի նպատակն է ծանօթացնել օրիորդներին խոհարարական արհեստի հետ, որպէս զի նրանք կարող լինէին վարել տնտեսուհու պաշտօն: Ուսումնարանում իբրև դասատու հրաւիրված են շատ խոհարարներ և խոհարարուհիներ խոհարարական բարձր կրթութեամբ:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունվարի: Ձմեռային պալատում յունվարի 15-ին տեղի ունեցաւ մի մեծ պարահանդէս: Յունվարի 20-ին գիւղական հողային բանկի Մոսկվայի բաժանմունքը փոխատուութեան գործողութիւններ է սկսում Վլադիմիրեան նահանգում: Սալըսբըրիի ճառի առիթով «Journal de St. Pétersbourg» նկատում է, որ բրիտանական պրեմիերից չէր էլ կարելի սպասել աւելի առողջ և աւելի արդարացի դատողութիւն Ռուսաստանի մտադրութիւնների վերաբերութեամբ, քան այն՝ որը նա արտայայտեց: Իսկ ինչ վերաբերում է նրա արտաքին քաղաքականութեան խաղաղասիրական բնաւորութեանը, դրա ամենաճիշդ բացատրութիւնը կարող են լինել Չերչիլի յայտնութիւնները: Անցնելով դրանից յետոյ բօլգարական գործերին, լրագիրը, հերքելով օտար լրագիրների հաղորդագրութիւնները, ասում է, որ ռուսաց կառավարութիւնը չի հրաժարվի իր նախագծից, ուստի և խօսք էլ չէ կարող լինել այժմեան խնամակալների և նոցա ներկայացուցիչների հետ սկսելի բանակցութիւնների մասին: Ցանկովի և այլ ներկայացուցիչների միաժամանակ Պոլսում գտնվելը կարող է առիթ տալ զանազան բացատրութիւնների, որոնք պաշտպանութիւն գտնելով պետութիւնների ներկայացուցիչների և Բ. Դրան խորհուրդներից, կարող են առաջ բերել կառավարութեան մի այնպիսի կազմակերպութիւն, որին կարելի կը լինէր ընդունել, և որի հետ կարելի կը լինէր սկսել բանակցութիւններ: Ցամենայն դէպս, այդ բացատրութիւնները կարող են մասամբ օգուտ բերել այն նկատմամբ, որ եթէ դոքա անաջող վախճան կունենան, այդ դէպքում կազատեն Ռուսաստանին ամեն տեսակ պատասխանատուութիւնից այն հետևանքների վերաբերմամբ, որոնք կարող են առաջ գալ այժմեան անիշխանութեան շարունակութիւնից: Վերջումը լրագիրը հերքում է բօլգարական գործերում Պապի միջամտութեան մասին տարածված լուրերը:

ԺՈՒՐԺԵՎՕ, 17 յունվարի, Սիստովայի քաղաքացիներ՝ Կօնստանտինով, Բրաչկով, Անեվ և Տիչեվ արձակված են Րուշչուկի բանտից երաշխաւորութեամբ. բայց Րուշչուկից հեռանալ նոցա արգելված է:

ԼՕՆԴՕՆ, 17 յունվարի: Պատերազմական մինիստրը հաղորդեց լորդերի ժողովին, որ մագազինային հրացանները գործածութեան մէջ մտցնելու հարցը լուծվելու մօտ է, որ կամաւորների թիւը պակասացնելու մտադրութիւն չը կայ, որ կամաւորների զօրաբաժինը զինաւորվում է 84 դաշտային թնդանօթներով, և որ ծովային կայարանները ամրացվում են:

ՍՕՖԻԱ, 17 յունվարի: Հաստատ աղբիւրներից ստացված լուրերից երևում է, որ բօլգարական կառավարութիւնը համաձայնվում է կազմակերպել բոլոր կուսակցութիւններից բաղկացած կառավարութիւն, տալով ընդդիմադրական կուսակցութեանը մի տեղ խնամակալութեան մէջ և երկու տեղ մինիստրութեան մէջ, բայց այն պայմանով, որ Բ. Դուռը առաջ պաշտօնական կերպով մի թեկնածու առաջարկէր իշխանական գահի համար:

ՓԱՐԻԶ, 18 յունվարի: Երէկ արտաքին գործերի մինիստրին դիպլօմատիական ճաշ տրվեցաւ, որին ներկայ էր և գերմանական դեսպանը, որը դիտմամբ այդ բանի համար եկել էր Կաննից:

Կ. ՊՕԼԻՍ, 18 յունվարի: Տիեզերական պատրիարքի ընտրութեան ժամանակ ամենաշատ ձայներ ստացաւ նախկին պատրիարք Յովակիմ III-ը: Վերջնական ընտրութիւնը տեղի կունենայ միւս կիրակի օր, երբ Բ. Դուռը արդէն վերաստուգած կը լինի այսօրվայ ընտրութիւնը:

ԺՈՒՐԺԵՎՕ, 18 յունվարի: Բօլգարական սպաները վճռեցին Սօֆիայի բերդապետին պատերազմական դիկտատոր հռչակել, ենթարկելով նրա իշխանութեանը խնամակալներին և քաղաքացիական բոլոր իշխանութիւնները:

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Յունվարի 19-ին

Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրա արժէ	$22^7/_{32}$	պէնս.
— — Համբուրգի վրա —	$188^3/_4$	պֆ.
— — Փարիզի վրա —	235	սան.
Ոսկի — արժէ — —	8 ›	90 կ.
Մաքսային կուպօններ — . .	173 ›	— ›
Արծաթ — — — . . .	1 ›	43 ›
Բօրսայի դիսկօնտներ — . .	$5^1/_4$ և $6^1/_2$% ›	
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	100 ›	— ›
— — — — 2-րդ —	99 ›	50 ›
— — — — 3-րդ —	99 ›	12 ›
— — — — 4-րդ —	99 ›	12 ›
— — — — 5-րդ —	99 ›	12 ›
— — — — 6-րդ —	99 ›	25 ›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին շրջ.	99 ›	12 ›
— — 2-րդ —	99 ›	12 ›
— — 3-րդ —	99 ›	— ›
Ներքին 5% առաջին փոխառութ.	238 ›	50 ›
— երկրորդ —	228 ›	75 ›
$5^1/_2$% րէնտա	103 ›	25 ›
Ոսկեայ րէնտա.	185 ›	75 ›
Նոր կօնսօլիդած փոխառութիւն. .	158 ›	— ›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	159 ›	— ›
$5^1/_2$% գրաւական թղթեր Խերսոնի կալուած. բանկի.	97 ›	— ›
6% գրաւակ. թղ. Խարկօվի կալ. բան.	103 ›	— ›
— — Պօլտավայի— —	101 ›	50 ›
— —Պետ.Տուլսկ.— —	101 ›	87 ›
— — Կիևի — —	101 ›	75 ›
— — Մոսկվայի — —	102 ›	50 ›
— — Բեսարաբ. Տաւր.—	100 ›	50 ›
— — Նիժ. Սամար. —	101 ›	50 ›
— — Վիլնայի —	101 ›	— ›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	— ›	— ›
— —Քութայիսի-18 և 43 տ.	— ›	— ›
Վօլժսկօ-Կամսկի բանկի ակցիաները	569 ›	— ›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	269 ›	50 ›
Րիբինսկ-Վօլօգօյի ընկ.	98 ›	25 ›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	94 ›	37 ›
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	95 ›	25 ›
Օդեսայի — — .	93 ›	25 ›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օբլ. .	— ›	— ›
Նոր երկաթուղային րէնտա . .	98 ›	62 ›
Պետական բանկի 6-դ հրատարակութեան տոմսերը	— ›	— ›
Գրաւ. թղ. Ազնւ. բանկի . . .	99 ›	— ›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES
PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
(ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.
Հինգշաբթի, 22 յունվարի, ԲԱԹՈՒՄԻՑ դուրս կը գնայ շոգենաւ CAMBODGE (ԿԱՄԲՕՋ) նաւապետ CAMOIN (ԿԱՄՈՒԷՆ) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պօրտ-Սայիդ և Ալէքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԳՈՒ պ. պ. ԲՈՒՐԿՀԱՐԴԻ և ԸՆԿ. իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԷՈՐԳ ՀԵԶՕՐԵԱՆ ՀԵԶՈՒՐԵԱՆՑԻ: 3—3

13—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисѣ (Графская ул., противъ Музея).

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԴԵՂԱՏԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէյի դիմաց):
Ստացված է Մալց-Էկստրակտ և հացի համար կօնֆեկտներ՝ «Մի հացիր»: Ձկան իւղ՝ մաքրած և ոչ-մաքուր. Պրօվանսի ձէթ, քացախի էսէնցիա, բուսական ձէթ, ԲԵՐԺԵՐԻ ԱՄԵՆԱԼԱՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՕՍԼԱՑ, լեզակ՝ փոշիով և գունտերով. բծեր հանելու դեղեր, կօշկաներկ և մեքենին կօշիկների համար. սամավարը և առհասարակ մետալեայ գործիքները սրբելու իւղ և փոշի ՇՎԵԴԱԿԱՆ ԳՐԵՖՍԻ ԱՌԱՋԻՆ ՖԻՐՄԱՅԻ ԼՈՒՑԿԻ, և տնտեսութեան ուրիշ պարագաներ: Լէնգիլի թխտենու բալզամը. թխտենու կրէմ. Էմուլսիա և Էնգլօնսի կօսմետիկական սրբիչներ, երեսի և մարմնու թարմութիւնը պահպանելու համար: Կիտոնէնի Էլէօպատ մազերը սևացնելու համար:
Դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մէջ, ԹԻՖԼԻՍՈՒՄ, և ԲԱԳՈՒ նրա բաժանմունքում:

Մի Հայ ՕՐԻՈՐԴ, որ աւարտել է իր ուսումը Գայիանեան դպրոցում, ցանկանում է մասնաւոր տներում դասեր տալ: Հասցէն „ՄՇԱԿԻ" խմբագրատունը:

ՇՕԿՕԼԱԴ
Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.
(Ц. 4857.) 47—50 (և)

ԲԱՐՕՆ ՖՕՆ-ԿՈՒԶԵՆԲԱՒԻ
ԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ
Պատրաստում է ամեն սիստեմայի
ԼԱՄՊԱՅԻ ԱՊԱԿԻՆԵՐ
Նոյնպէս և լամպայի ուրիշ պարագաները, էժանագրած գներով: Մանրամասնութիւնները կարելի է իմանալ Սիմենս և Գալսկէ գործակալութեան գրասենեակի մէջ, Թիֆլիսում: 3—10 (և. շ.)

ПОДПИСКА НА
„ТРУДЫ"
Кавказскаго Общества Сельскаго Хозяйства
1887 года,
выходящіе ежемѣсячно и посвященные нуждамъ кавказской сельскохозяйственной промышленности,
ПРИНИМАЕТСЯ ВЪ ТИФЛИСѢ,
въ канцеляріи Кавказскаго Общества Сельскаго Хозяйства, что на Барятинской улицѣ, въ Александровскомъ саду. Подписная цѣна изданія за годъ ЧЕТЫРЕ РУБ. съ пересылкою во всѣ города Российской имперіи и доставкою на домъ. Отдѣльные номера продаются по 50 коп. Для напечатанія въ „Трудахъ" принимаются сельско-хозяйственныя объявленія, по соглашенію съ бюро Общества. 2—2

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՅԼՏՒՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱԾ
ՀՆԴԿԱԿԱՆ ՄԿՆԴԵՂ

ՄԻՇՈՒՆԱՑ



ՄԵԾ ԵՒ ՓՈՔՐ ՄԿՆԵՐԸ կատարելապէս ոչնչացնելու համար: Արկղիկի գինը 1 ր. 50 կ. Արկղիկի ¼ արժէ 60 կ.:
Հեղուկ բաղլինջների դէմ: Սրուակի գինը, վրձինով միասին 1 րուբլի:
Լու, ցեց, բողոճ ոչնչացնելու փոշի: Դօրակի գինը 1 ր. 20 կ. գունտայերշի մեքենան առանձին. ½ դօրակ 65 կ.
Սմբակային օծուն, Բիս Գուտմանի, ձիերի սմբակները ամեն օր օծելու համար, պահպանում է սմբակը ճաքելուց և նալելու միջոցին թուլանալուց: Դօրակի գինը 1 րուբլի:
Կուզքի ճարպի օծուն, պահում է խոնաւութեան դէմ և կակուղ դրութեան մէջ՝ կօշիկները, բօտինները, ձիերի սանձերը: Գինը 75 կօպ.
Մազերի ներկ, սև, շագանակագոյն և շէկ: Մի անգամ ներկված մազերը իրանց գոյնը պահում են մինչև վեց շաբաթ: Ներկված մազերը չէ կարելի զանազանել բնական մազերից: Արկղիկը 3 րուբլի.
Բիս. Գուտման
Գլխաւոր պահեստ ԹԻՖԼԻՍՈՒՄ գտնվում է Վ. Գրիվնակի դեղատան ապրանքների մագազինում, «Լօնդօն» հիւրանոցի տակ, Ջուբալովի տանը: 35—100

ՆՈՐ ԳԻՐՔ. (ՌՈՒՍԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ)
ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ ՀԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ Ս. Բահաթրեանի. 1 շրջան: Գինը 35 կ: Թիֆլիսի գրավաճառանոցներում: 10 աւելի առնողներին 20% զիջումն կը լինի կենտրոնական գրավաճառանոցում: 13—30

Дозволено цензурою, Тифлисъ 19 Января 1886 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовская у. д. каз.